ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն

«01» սեպտեմբեր 2023

Կ.Տ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ձագիկավանի միջնակարգ դպրոց

X դասարան

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Պետրոսյան Ծովինար Գ.

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2023-2024» ուսումնական տարի

# ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**1.** ***Ներածություն /դասարանի բնութագիրը/*** 10-րդ դասարանում սովորում են 8 աշակերտներ՝ 3 աղջիկ, 5 տղա: Տղաներից երկուսը նոր են տեղափոխվել այլ դպրոցից: Սովորողները աշխույժ են, մի քիչ չարաճճի, սակայն դասարանում կան առողջ մրցակցային հարաբերություններ, ուսման նկատմամբ դրսևորում են պատասխանատվություն, տիրապետում են իրենց իրավունքներին և պարտականություններին:

**2.** ***ՈՒսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում*** Ուսումնադաստիարակչական աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար համագործակցել և ծնողների, և պարապող ուսուցիչների հետ: Կարևորել աշակերտներին հետաքրքրող մասնագիտությունների վերաբերյալ խորհրդատվությունը, անհրաժեշտության դեպքում հրավիրել մասնագետների, աշակերտների հետ լինել իրենց հետաքրքրող աշխատավայրում: Դասղեկի ժամերին կարևորել ընկերասիրությանը, հարգանքին, կարգապահությանը, ուսմանը, հանդուրժողականությանը, հայրենասիրությանը վերաբերող թեմաները: Դասարանում ծագած որևէ խնդիր հարթել դասարանական ժողովում՝ խաղաղ և արդար, չոտնահարելով որևէ մեկի ինքնասիրությունը:

## *3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ*

***3.1 Հոգևոր դաստիարակությունը*** դաստիարակության հիմքն է. Սովորողների մոտ ձևավորել հարուստ ներաշխարհ, սովորեցնել սիրել գիրքը, հետաքրքրություն գիտելիքի հանդեպ, կարողանալ լսել դիմացինին: Հանդես գալ ազգային հերոսների մասին ելույթներով, ծանոթանալ ազգային եկեղեցական տոներին, լինել արժանապատիվ մարդ:

***3.2 Գեղագիտական դաստիարակություն*** Ձևավորել գեղագիտական ճաշակ, մասնակցել ցուցահանդեսների, թատերական, երաժշտական միջոցառումների: Կարգի բերել իրենց վստահված կաբինետը, սահմանել հերթապահություն, ձևավորել և ամրապնդել սեր գեղեցիկի հանդեպ:

***3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն*** Ավագ դասարանի սովորողը պարտավոր է իմանալ իր երկրի պատմությունը, իր հերոսներին: Որոշակի դասղեկի ժամեր հատկացնել Ազգային բանակին, զինվորին, հրամանատարներին: Սեր և հարգանք ձևավորել ՀՀ-ի հանդեպ՝ ընդունելով այն որպես գերագույն արժեք:

***3.4 Ֆիզիկական դաստիարակություն*** Շեշտը դնել սովորողների ֆիզիկական զարգացման, առողջ ապրելակերպի վրա: Խորհուրդ տալ կազմել օրվա ռեժիմ, աշխատել կյանքում մտցնել կարգ ու կանոն, կազմակերպել մարզական միջոցառումներ, որոնք կնպաստեն ֆիզիկական զարգացման և առողջության ամրապնդմանը:

***3.5 Աշխատանքային դաստիարակություն*** Ապագան պատկանում է աշխատող ու մտածող մարդուն. Յուրաքանչյուր մարդ ինքն է իր բարեկեցության ստեղծողը: Աշխատանքն ազատում է երեք չարիքից՝ աղքատությունից, արատավոր սովորույթներից և ձանձրույթից:

***3.6 Բնապահպանական դաստիարակություն*** Արժևորել բնությունը, նրա խնամքը, իմանալ աշխարհին սպառնացող 10 աղետները: համագործակցել կապանցի բնապահպանների հետ: Բացատրել սովորողներին, աշխարհի ամենացավոտ հիմնախնդիրներն արդյունք են բնության և մարդու միջև եղած հակասության:

***4. Դպրոց – ընտանիք կապը*** Ամրապնդել ծնող-դպրոց կապը, հաճախակի կազմակերպել հանդիպումներ, իրազեկել ծնողներին իրենց երեխաների առաջադիմությանն ու վարքին: Կարևորել ծնողների մասնակցությունը դաստիարակությանն առնչվող խնդիրների համատեղ քննարկմանը:

## *ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ*

1. Գիտելիքը ուժ է:
2. Զրույց՝<<Ստեղծենք առողջ կոլեկտիվ>>, ծանոթացնել սովորողների կանոնադրության պահանջներին, հստակեցնել անելիքները:
3. Աշխատանքների բաշխում, աշխորհրդի ընտրություն, կազմակերպական անկյան ստեղծում:
4. <<Մեր երազանքների երկիր Հայաստան>>- Իմ երազանքը:
5. Քննարկում <<Գթասրտությունը բարոյականության հիմքն է>> թեմայով:
6. <<Լուսավոր մարդ՝ Ուսուցիչ>>. Քննարկում՝ <<Կարող եմ աշխատել ուսուցիչ. ինչու>>
7. Աշխարհի ամենացավոտ հիմնախնդիրները՝ պատերազմ, թրաֆիկինգ, թմրամոլություն, էկոլոգիական աղետներ:
8. Քննարկումներ՝ <<Առողջ հոգի առողջ մարմնում>>, <<Որն է սնվելու կուլտուրան>>
9. Ինչ է խտրականությունը, ինչպիսի հոգեվիճակ է ունենում խտրականության ենթարկված մարդը:
10. Թեստերի լրացում մասնագիտական կողմնորոշման նպատակով. Ինչ պահանջարկ ունի այսօրվա աշխատաշուկան:
11. Ինչ կուզեմ անել ու ստեղծել, որ օգտակար լինեմ բոլորին:
12. Հեռախոսների և համակարգիչների դրական և բացասական ազդեցությունը:
13. Հայկական մշակույթի ձեռքբերումները:
14. Ինչպես ենք ամփոփում ամփոփում առաջին կիսամյակը:
15. Առաջին կիսամյակի ամփոփում. Նախատոնական տրամադրություն:
16. Մեր անելիքները երկրորդ կիսամյակում:
17. Իմ անպարտելի բանակ. <<Կանայք 44-օրյա պատերազմում>>:
18. Շնորհավոր տոնդ, Հայոց բանակ:
19. Զրույց՝ <<Ինքնագնահատում և ինքնահարգանք>>: Հաղորդակցվելու, մեկ այլ մարդու ունկնդրելու արվեստը: Սովորում է նա, ով կարողանում է լսել:
20. Թրաֆիկինգ կամ մարդկանց վաճառք:
21. Ինչն եմ գնահատում մարդու մեջ: Զրույց՝ <<Ինչ եմ հասկանում <<Ներառական կրթություն>> ասելով>>:
22. Պատրաստել անակնկալ մայրիկների համար:
23. <<Մեր քարե վկայագրերը>>. Ծանոթանալ Կապանի հուշարձաններին:
24. Այցելություն Կապանի երկրագիտական թանգարան:
25. Համպատրաստից շարադրություն՝ <<Ես 10 տարի անց, իմ նվաճումները>>:
26. Քննարկում՝ <<Իմ բնավորության ուժեղ և թույլ կողմերը>>:
27. Եղեռնը՝ որպես մարդկության մեծագույն ոճրագործություն:
28. Քննարկում՝ <<Աշխարհն առանց պատերազմների>>:

29. Ավարայրից մինչև Շուշի և մերօրյա իրավիճակ:
30. Հանդիպում ծնողների, պարապող ուսուցիչների հետ. Մեր նվաճումներն ու ձեռք բերած արդյունքները, մեր բացթողումներն ու սպասելիքները:
31. Իրավունքների և պարտականությունների սահմանազատում:
32. Ընթացիկ հարցերի քննարկում:
33. Երկրորդ կիսամյակի արդյունքների ամփոփում: